

ԳԱՐՍԵՎԱՆ ՍՐԿ. ԵՐԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ
«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

«Իսկ եթէ սկիզբն սուրբ է, և զանգուածն. և եթէ արմատն՝ ապա և ոստքն» (Հռոմ. ԺԱ 16): «Իսկ եթե երախայրիքը սուրբ է, սուրբ է և զանգվածը. և եթե արմատը սուրբ է, սուրբ են նաև ճյուղերը»:

Միրելի հավատացյալ ժողովուրդ, արարչագործությունից հետո մարդկության կողմից կատարված անօրինություններին ու աստվածամերժ գործերի պատճառով Աստված սթափեցրեց անհավատ մարդկային ցեղը, կենդանի թողնելով միայն Նոյ Նահապետին, որը պետք է դառնար նոր մարդկության նախահայրը: Ավաղ, ինչպես Նոյի նախորդները, այնպես էլ հետնորդները անկարող գտնվեցին երկրային գայթակղությունների առջև, շեղվեցին դեպի հավիտենական անմահություն առաջնորդող ուղուց, դարձան չար ուժերի կամակատարներ: Եվ մեղքի ծանրության տակ կորացած մարդը այնքան էր մխրճվել գայթակղության ճահիճը, որ անկարող էր առանց աստվածային լուրջ միջամտության խույս տալ անխուսափելի մահվանից: Այդ իսկ պատճառով Աստված Իր ընտրած մարգարեների միջոցով հայտնեց Մեսիայի գալստյան մասին: Սակայն, երբ ակնկալված Մեսիայի գալուստը «ի լրումն ժամանակի» իրականություն դարձավ, Աստուծո կողմից ընտրված միջավայրը չընդունեց նրան: Քանզի իր հոգին ուրացած մարդ արարածը այնքան էր տարվել նյութապաշտ կյանքով, որ Տիրոջ կողմից առաքվող Մեսիայի գալուստը հազիվ երկրային իմաստով հասկացավ:

Տիրոջ կողմից ընտրված այդ միջավայրը հրեա ժողովուրդն էր, որի սրբակենցաղ առաջնորդներին Աստված Իր տեսությանը արժանացնելուց բացի՝ դարձրեց այն Վեմը, այն Սուրբ Արմատը, որի վրա պիտի հիմնվեր նորաստեղծ Եկեղեցին: Պողոս առաքյալը հրեաներին համեմատելով ձիթենու, իսկ հեթանոսներին՝ վայրի ձիթենու հետ, ասում է. «Բայց քանի որ ձիթենու բնական ճյուղերը անպտուղ ու անպիտան գտնվեցին, Տերը նրանց փոխարեն պատվաստեց վայրի ձիթենուց վերցրած ճյուղեր», որոնք էլ, հաղորդակցվելով Սուրբ Արմատի հետ, հետագայում դարձան նրա կեղանի ու պտղատու մասը: Հրեաների անհավատարմությունն ու անհավատությունը առիթ դարձան՝ Ավետարանը հեթանոսների մեջ քարոզելու համար: Իսկ հեթանոսները այդ փառքին արժանացան միմիայն իրենց հավատքի միջոցով. «Նրանք իրենց անհավատության պատճառով կոտորվեցին, իսկ դու հավատով հաստատ մնացիր» (Հռոմ. ԺԱ 20), ասում է Պողոս առաքյալն ու շարունակում. «Ամենայն որ հաւատասցէ ի նա՝ մի՛ ամաչեսցէ: Զի ոչ գոյ խտիր Հրէի և հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին զոք կարդան առ նա. Զի

ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ Ազատեսցէ» (Հռոմ. Ժ 11—13):

Եվ ապրելու անհուն տենչով լցված Տիրոջ անունը կանչողների թվում էինք նաև մենք, մեր ժողովուրդը, ու ամենողորմ Աստված անպատասխան չթողնելով մեր պաղատանքները, իր առաքյալների ձեռքով սուկավ ընտրյալների թվում նաև մեզ պատվաստեց ձիթենու Սուրբ Արմատին:

Արժանի՞ էինք մենք դրան, թե ոչ, այդ ցույց է տալիս մեր երկհազարամյա պատմությունը: Առաքյալների օրինակով մեր անդրանիկ նահատակները իրենց սուրբ արյամբ նո՛ր ուժ հաղորդեցին նորաբողբոջ ոստերին, դրանք դարձրին հաստատուն ու աներեր: Թեև մեր թշնամիները բազմիցս ճկելով այդ ոստերը փորձեցին այն կտրել Սուրբ Արմատից, մեզ անհաղորդ դարձնել աստվածային լույսին, բայց միշտ էլ մատնվեցին անհաջողության, քանզի մեր հավատքը հիմնված էր ոչ թե ավազի, այլ բյուրավոր նահատակների արյամբ սրբագործված անշարժ Վեմի վրա: Քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց դեռ մեկ տասնամյակ չանցած, երբ բյուզանդական Մաքսիմիանոս Դայա կայսրը մեծ բանակով փորձեց հողին հավասարեցնել հայոց «սանհավատների» աշխարհը, ողջ հայ ժողովուրդը մեկ հոգի դարձած, զինվորի սրին միացնելով տերունական Խաչը, ելավ պայքարելու իր հավատքի ու հայրենիքի համար: Եվ հաղթե՛ց: Իր հավատքի հաստատումով հաղթեց նաև Վարդանանց պատերազմում, իր ո՛ղջ պատմության ընթացքում: Նա դարավոր դյուցազնական պայքարով համայն մարդկությանը ցույց տվեց, որ հայ ազգը չորացած ոստերի պես մատնված չէ՛ կորըստի, դատապարտված չէ՛ հավիտենական վախճանի, այլ նա պետք է շարունակի ապրե՛լ, պտղաբերե՛լ, իր նոր խոսքն ասել ողջ աշխարհին:

Հայ ազգը նման է այն հաստաբուն կաղնուն, որն իր սրբազան արմատները մըխրճելով Հայոց լեռնաշխարհի մեջ, սընվում է այնտեղից, մայր հողից կառչած՝ դարեր շարունակ ընդդիմացել է տարանցիկ կործանարար հողմերին, անշարժ պահելով հողմածեծ բունը, և ինչու չէ նաև՝ իրեն սնուցող հողը:

Պողոս առաքյալի այս պատկերավոր խոսքը իր մեջ պարունակում է նաև միասնականության, անբաժանելիության գաղափար: Մեզ համար Սուրբ Արմատը սրբազան երկիր Հայաստանն է, ճյուղերն ու տերևները՝ հայ ժողովուրդը, բունը՝ այդ երկուսի միասնությունը: Եվ միայն այդ միասնության շնորհիվ մենք կարող ենք աճել ու զորանալ, ծաղկել ու պտղաբերել, շենացնել երկիր Հայաստանը:

Սուրբ Արմատը մեր ազգն է, ոստերը՝ մենք: Եվ մեզանից ում համար որ օտար են բյուրավոր նախնիների արյամբ ձեռք բերված մեր «Սրբություն Սրբոցները»՝ Հողը, Հավատքը, Պատմությունն ու Մշակույթը, նա չորացած ոստ է մեր Սուրբ Արմատի վրա և դատապարտված այն նույն վախճանին, որին Տիրոջ կողմից արժանացան ձիթենու գոսացած ճյուղերը:

Արդ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, խնդրենք բարձրյալ Աստծուն, որ ուժ ու կարողություն շնորհի հայկազյան տոհմի զավակներին՝ մեր տառապած, բայց և փառապանծ ազգի Սուրբ Արմատի վրա հաստատուն մնալու, նրան արժանի ոստեր կոչվելու համար այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն: